շնորհիւ չափազանց զարգացած ոռոգման սիստեմի»:

Մենք կը տեսնենք յետոյ, թէ ի՛նչպիսի յատուկ ուշադրութիւն է դարձնում Հաքստհաուզէն Անդրկովկասի ոռոգման եւ ջրանցքների խնդրի վրայ:

Կովկասի լեզուների թիւը Հաքստհաուզէն հաշւում է 70:

Ինչ վերաբերում է յատկապէս Անդրկովկասի ժողովուրդներին, որպէս գլխաւորներ նրանց թւում՝ Հաքստհաուզէն յիշատակում է թաթարներին, վրացիներին եւ հայերին:

Թաթար ցեղի բնակութեան վայր նա անուանում է Արեւելեան Անդրկովկասը, վրացիներինը՝ Արեւմտեան Անդրկովկասը, իսկ հայերինը՝ Հարաւային Անդրկովկասը:

Թաթարների թիւը ռուսական վիճակագրական տախտակները հաշւում են 709,000, ասում է Հաքստհաուզէն: Արեւելեան Անդրկովկասի տարածութեան համար էլ տալիս է 1,500 քառակուսի մղոն (կամ 73,500 քառ. վերստ) թիւը: «Բայց թաթարները ապրում են ցրուած, նաեւ ամէն տեղ Կովկասում, անդամ վրացական ցեղի բնակութեան վայրի արեւելեան մասերում՝ Կախէթիայում եւ այլուր»:

Տեսնում ենք ուրեմն, որ թաթար ցեղի տարածման այն ժամանակուայ եւ ներկայիս դրութիւնները համապատասխանում են իրար:

Վրացական ցեղի տարածման շրջանը եւս այն ժամանակ նոյնն էր, ինչ որ՝ այժմ, այսինքն՝ Բուն Վրաստան (Գրուզիա) կամ Քարթալինա եւ Կախէթիա, Իմերէթիա, Մինգրելիա, Սվանէթիա եւ Գուրիա: Ընդամէնը 79,000 քառակուսի վերստ եւ կամ մօտ 1,600 քառ. մղոն է հաշւում Հաքստհաուզէն այդ տարածութիւնը, իսկ վրացական շրջանի բնակիչների ընդհանուր թիւը՝ 677,000:

«Այս վերջինից հաղիւ թէ աւելի քան 600,000 պատկանելիս լինին վրացական ցեղին: Մնացած թիւը բաղկացած է նրանց մէջ ցրուած թաթարներից, հայերից, տաճիկներից, քրդերից, ռուսներից, գերմաններից եւ հրեաներից»:

«Անդրկովկասի հարաւային մասը կամ Ռուսական Հայաստանը, շարունակում է Հաքստհաուզէն, 380 քառակուսի մղոն*) տարածութիւն է գրաւում. ռուս վիճակագրական տախտակների համաձայն ունի 164,500 բնակիչ: Այս թուից հայերն են՝ 110,000 հոգի, մնացածը՝ թաթարներ, քրդեր, եւայլն»:

Սրան աւելացնում է սակայն. «Բացի դրանից՝ հայերը ցրուած են այդ բոլոր (այսինքն՝ Անդրկովկասի) երկրամասերում: Նրանց ընդհանուր թիւը հաշւում են 300,000 հոգի»:

Այս թուական տեղեկութիւններին Հաքստհաուզէն կցում է հետեւեալ ծանօթութիւնը (Բ. 98).

«Այս բոլոր վիճակագրական տուեալները **սակաւ վստահելի են**: Քէօպպէնը (Koeppen), լաւագոյն ռուս վիճակագրողը, 1838 թուականի համար հաշւում է 679,497 հոգի արական ազգաբնակութիւն (կամ ընդամէնը՝ մօտ 1,400,000): Դրանից վրացական ցեղին պատկանում են 182,431 արական բնակիչ, թաթար ցեղին՝ 319,230, իսկ հայ ցեղին՝ 147,303 արական բնակիչ: Մինգրէլները, սվանէթները, Գուրիացիները եւայլն սակայն չեն մտնում այս հաշուի մէջ»:

Իրաւունք ունի Հաքստհաուզէն՝ իր առաջ բերած եւ Անդրկովկասին վերաբերող վիճակագրական տուեալները «սակաւ վստահելի» անուանելու: Մենք տեսանք արդէն, որ նա մի տեղ 4 միլիոն է հաշւում Կովկասի բնակիչների թիւը, մի ուրիշ տեղ՝ 4,320,000: Որքան եւ խոշոր չէ դրանց տարբերութիւնը, բայց անշան էլ չէ:

Ինչ վերաբերում է մասնաւորապէս Անդրկովկասին, տեսանք որ նրա բնակիչների թիւը Հաքստհաուզէն մի տեղ 2,150,000 է հաշւում, մի ուրիշ տեղ՝ 1½ միլիոն: Երբ քով քովի ենք բերում նոյն հեղինակի տեղեկութիւնները Անդրկովկասի երեք մասերի բնակչութեան մասին առանձին-առանձին, տեսնում ենք, որ գումարը մօտաւորապէս 1½ միլիոն է ստացւում: Վրաստանին (Արեւմտեան Անդրկովկաս), թաթարների երկրամասին եւ կամ, այսօրուան անուանակոչումով, Ատրբէջանին (Արեւ. Անդրկ.) եւ Հայաստանին (Հարաւ. Անդրկ.) յատկացուած թուերի գումարը իսկապէս որ կ'անի 709,000+677,000+164,000=1,550,000 բայց ո՛չ՝ 2,150,000:

Ի՞նչպէս բացատրենք 600,000-ի մնացորդ

*) Այսինքն՝ 18,620 քառ. վերստ: